ՀՐԱՉՅԱ ԿԱԺՈՅԱՆ
HRACHIA KAZHOYAN

ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԵՋ

Կամավոր գործունեությունը զգալի ազդեցություն ունի սոցիալական և տնտեսական զարգացումների մեջ ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում: Կամավորությունը ժամանակակից հասարակության զարգացման հատկանիշներից է (Hodgkinson 2003, 38): Այն կարևոր տեղ է զբաղեցնում արդի հանրային քաղաքականության օրակարգում, քանի որ մեծ դեր ու կշիռ ունի հատկապես քաղաքացիների անհատական զարգացման, սոցիալական համագործակցության և սոցիալական հրատապ խնդիրների լուծման գործընթացներում (Rochester 2006, 2): Կամավորությունը գլոբալ երևույթ է: Ճանաչելով կամավոր գործունեությունների պոտենցիալն արդի գլոբալ խնդիրների դեմ պայքարում, 1997թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հռչակեց 2001 թվականը Կամավորների միջազգային տարի:

Ամեն տարի միլիոնավոր մարդիկ մասնակցում են միջազգային կարևոր ակցիաների որպես կամավորներ: Ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի գնահատման գրասենյակի, 2000 թվականին 10 միլիոն մարդ է մասնակցել պոլիոմիելիտի դեմ պատվաստման աշխատանքներին աշխարհով մեկ: Այդ մասնակցության արժեքը գնահատվեց մոտ 10 միլիարդ դոլար, որը գերազանցում էր ծրագրում ներգրավված պետությունների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցության հնարավորությունները (UNDP 2003, 1): Իսկ, օրինակ, 1991-1997 թվականներին աշխարհի 120 երկրներում ծավալված ականապատման դեմ արշավին մասնակցեց ավելի քան 300 միլիոն մարդ: «Արտասահմանյան կամավորական ծառայություններ» (ԱԿԾ)[1] կազմակերպության կարծիքով, կամավորները բազմիցս հանդիսացել են փոփոխության կարևորագույն շարժիչ ուժը: Կամավորների կողմից ձեռնարկված կամ իրականացված զանազան պատասխանատու գործերը, երբ միանում են իրենց ցանցային հաղորդակցման և տարբեր գործընկերների հետ համագործակցելու կարողությանը, բացառիկ արդյունքներ են տալիս զարգացման բնագավառում (VSO 2003, 3):

1. Voluntary Services Overseas (VSO) www.vso.org.uk

Ըստ Հավիեր դե Սուզա Բրիգսի կազմակերպել նշանակում է մարդկանց համախմբել և ինֆորմացիա հավաքել փոփոխություն իրականացնելու համար: Այն հնարավոր և արդյունավետ է դարձնում մարդկանց միասնական գործողությունները(de Souza Briggs 2003a): Միևնույն ժամանակ, որպես համայնքային մակարդակով կազմակերպման կարևոր գործոն, կամավորությունը փոխադարձ վստահության ու համերաշխության, հետևաբար նաև սոցիալական կապիտալի ձևավորման հիմք է ստեղծում (Քաուլեթերփարթ ինթերնեշնլ 2010, 3): Իսկ ի՞նչ է առհասարակ կամավոր լինելը: Որոշ երկրներ ամրագրել են կամավորության սահմանումը համապատասխան օրենքներում այն բնութագրելով որպես ինքնակամ, հիմնականում չվարձատրվող (կամ որոշակիորեն սահմանված նվազագույն վարձատրությամբ) իրականացվող հանրօգուտ կամ բարեգործական աշխատանք: Վարձատրության բացակայության հանգամանքից ելնելով կարելի է ենթադրել, որ կամավոր կարող են լինել միայն ֆինանսապես ապահով մարդիկ, և որ այդ երևույթը հիմնականում զարգացած երկրներին է հատուկ: Մինչդեռ փաստ է, որ համայնքային զարգացման համատեքստում կամավորությունն իր լավագույն դրսևորումներն է ստանում հենց զարգացող երկրներում, որտեղ սոցիալական փոփոխության կարիքը նույնիսկ սոցիալապես անապահով և գործազուրկ մարդկանց է ստիպում ներգրավվել համայնքային զարգացման գործընթացներում: Թեև գոյություն ունեն կամավորության տարբեր սահմանումներ, նրանց հիմնական մասը պարունակում է երեք սկզբունքային բաղկացուցիչներ. կամավոր աշխատանքն իրականացվում է ըստ ցանկության առանց պարտադրանքի, առանց դրամական վարձատրության (թեև չի բացառվում իրական ծախսերի հատուցումը) և հօգուտ այլոց: ԱԿԾ փաստաթղթերից ուշագրավ է Ռոմի Թիոնգկոյի հետևյալ ուղերձը.

> «Եթե եկել ես մեր հանդեպ կարեկցանքից դրդված, եթե կարծում ես, որ ունես մեր դժվարությունների, մեր հարցերի պատասխանը և եթե մտադիր ես երկու տարի հետո ետ նայել և տեսնել քո նախաձեռնած ծրագիրն իրագործված, ուրեմն քո տեղն այստեղ չէ: Բայց եթե դու այստեղ ես, որովհետև ինքդ էլ անպատասխան հարցեր ունես, եթե եկել ես ստանալու, ոչ միայն տալու համար ու եթե երկու տարի հետո գոհ կլինես, որ թողնում ես ընկերներիդ, որ քեզ հետ ընկերանալով ավելի ինքնավստահ դարձան որպես մարդ և գյուղացի, ապա խնդրում ենք, մնա մեզ հետ» (VSO 2003, 4):

Բնավ չքերագնահատելով փոփոխության գործընթացի որոշ համընդհանուր կողմեր, այս կարծիքը մեկ անգամ ևս հաստատում է, որ այդ գործընթացը ինքնատիպ է և բացառիկ իմաստ ունի յուրաքանչյուր համայնքի անդամների համար: «CIVICUS Քաղաքացիների մասնակցության համաշխարհային միավորում» կազմակերպության համոզմամբ, կամավորությունը մարդկանց օգնում է ներգրավվել համայնքային զարգացման գործընթացներում և հզորացնում է տեղական ժողովրդավարական կառավարումը (CIVICUS 2008, 23):

Դժվար է գտնել որևէ ունիվերսալ մուտեցում, որը կաշխատի ամենուրեք ու ցանկացած համայնքում և ցանկացած հիմնախնդրի դեպքում դրական արդյունք կտա: Համեմատելով կամավորության շարժումը տարբեր երկրներում, Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը նշում է, որ Հայաստանում առկա են կամավորության զարգացման բոլոր նախադրյալները: Այդ նախադրյալների թվում նշվում են կրթված հասարակությունը, մեծ գործազրկությունը և ամենակարևորը դեպի կամավորություն մարդկանց հզոր հակվածությունը և վաղ մանկությունից խրախուսվող բարյացակամությունը (IEFS 2004, 2):

Որպես փոփոխության կատալիզատոր, կամավորությունը վարակիչ է այն իմաստով, որ նրա դրսևորման դիտարկումն ինքնին հետաքրքրություն է առաջացնում, իսկ կամավորության քննարկումը նպաստում է քաղաքացիական նոր նախաձեռնությունների առաջացմանը: Նման ակցիաների կազմակերպման շնորհիվ անցյալ տասնամյակում Հայաստանում վերածնվեց և որոշակի զարգացում ապրեց կամավորության մշակույթը:

Պատկեր 1. 2001 - 2003 թթ. «Բարի, բարի...» կամավորական շարժման միջոցառումների (ա) և մասնակիցների (բ) թիվը

ա *բ*



Այսօր տարիներ անց, այս պատկերն արդեն կարող է ընկալվել որպես պատմական փաստ, սակայն այն ցույց է տալիս, թե որքան արագ է տարածվում

կամավորությունը Հայաստանի պայմաններում համապատասխան օժանդակության ու նպաստավոր քաղաքականության առկայության դեպքում:

Նշելով, որ ցանկացած երկրում օրենսդրական դաշտը կարևոր է կանոնակարգելու և կամավորության մշակույթ ձևավորելու համար, Քաունթերփարթի ինքերնեշնլի փորձագետները գտնում են, որ Հայաստանի օրենսդրությունը չի նպաստում կամավորության կայացմանը, քանի որ չկա կամավորների հստակ սահմանված իրավական կարգավիճակ: Այդ հանգամանքը կազմակերպությունը դիտարկում է որպես կամավորության մշակույթի ձևավորման երեք կարևոր գործոններից մեկը, դրանց թվում նշելով նաև կամավորների կառավարումը և քաղաքացիների կամավորությանը մղող ցանկությունն ու դրդապատճառները (Քաունթերփարթ ինքերնեշնլ 2010, 14):

Ըստ 2002 թ. ընդունված ՀՀ «Բարեգործության մասին» օրենքի 9-րդ հոդվածի «կամավորներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր սույն օրենքի նպատակներից ելնելով կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին»[2]: Փորձագետները բազմիցս նշել են, որ Հայաստանի օրենսդրական դաշտում բացակայում են կամավորության արժևորումը և և խրախուսման մեխանիզմների համապատասխան հարաբերությունների իրավական սահմանումը: Կամավորները հատուկ մարդիկ են, նրանք ի վիճակի են խթանել համայնքների զարգացումը և նույնիսկ վերակազմակերպել համայնքները: Համայնքային յուրօրինակ պայմաններում աշխատելիս շատ կարևոր է անհատական և կազմակերպական կապեր ստեղծելը: Այդ առաքելությունը կամավորներին վստահելիս կարելի է անհոգ լինել, քանի որ նրանցից շատերի համար նոր կապեր հաստատելը աշխատանքի հիմնական դրդապատճառներից մեկն է:

Կամավորներ ներգրավելիս անհրաժեշտ է հստակ պատկերացնել և բացատրել նրանց աշխատանքի նպատակը: Այսպես, Օչմանն ու Զորդանը գտնում են, որ հարկավոր չէ պարզապես փնտրել աղքատների և ծերերի համար սնունդ պատրաստողների, այլ պետք է մարդկանց ներգրավել թերսնվող և միայնակ ծերերի խնդիրները լուծելու գործում: Իսկ, օրինակ, Ֆանդրեյզինգի (դրամահավաքի) համար կամավորներ հրավիրելիս կարելի է հայտարարել, որ աղքատներին ու անօգնականներին օգնելու նպատակի իրականացումը դժվարացնում է այն մարդկանց պակասը, որոնք պատրաստ են գովազդային արշավ կազմակերպել կամ միջոցներ հայթայթել (Ochman and Jordan 1997, 6):

[2] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1332

Համայնքային զարգացման գործընթացում կամավորությունը ուղղակիորեն կապված է առաջնորդության և համախմբման գործոնների հետ և կամավորության գլխավոր դրդապատճառներից է սոցիալական փոփոխություն իրականացնելու հնարավորության գիտակցումը: Նման կամավորական ակցիաները սովորաբար ունենում են հետևյալ փուլերը. կարիքների ուսումնասիրությունը, գործողության պլանավորումը, մարդկանց մոտիվացիան, կազմկոմիտեի ստեղծումը, հասարակության իրազեկումը, միջոցների ներգրավումը, գործողությունների սկիզբը, իրականացումը և ավարտը, ընթացքի մոնիտորինգը և արդյունքների գնահատումը[3]:

Կամավորությունը ձևավորվում է նաև առկա կազմակերպություններում կամավորների ներգրավման պրակտիկայի միջոցով: Կամավորության առկայությունը մարդկային ռեսուրսների զարգացածության չափանիշ է քաղաքացիական կազմակերպման ցանկացած գործընթացում: Հետևաբար, կամավորության կառավարումը կարևոր է նաև կազմակերպական զարգացման տեսանկյունից. կամավորների ներդրումն ավելացնում է զարգացման ծրագրերի արդյունավետությունը և ապահովում նրանց շարունակականությունը:

Պատկեր 2. Կամավորության կառավարման ֆունկցիոնալ քարտեզ[4]



[3] IFES (2004);
[4] Voluntary Sector NTO (2003, 3)

Նախքան բուն աշխատանքին անցնելը կամավորները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալու կազմակերպության կառուցվածքին և ծրագրի էությանը: Այդ յուրատեսակ կողմնորոշման ընթացքում նրանք պետք է հստակ պատկերացում ստանան իրենցից ակնկալվող դերի մասին և որոշակի պարտավորություններ ստանձնեն կատարած աշխատանքի արդյունքի համար: Ինֆորմացիայի ազատ փոխանակումը ցանկացած խմբի ներսում կարևոր նշանակություն ունի այդ խմբի կամ կազմակերպության բարեկեցության համար: Այդ պատճառով, կամավորների հետ աշխատելիս, պետք է ապահովել տեղեկանալու հավասար պայմաններ, որպեսզի նրանք կարողանան լիովին օգտագործել իրենց ընդունակություններն ու եռանդը: Կամավորներին հարկ է ուսուցանել և, խմբի լիիրավ անդամներ դարձնելով աջակցել, խրախուսել և, իհարկե, գնահատել նրանց կատարած աշխատանքը:

Յուրաքանչյուր համայնքում գործող սոցիալական փոփոխության մեխանիզմը եզակի է: Այդ մեխանիզմը հնարավոր չէ պատճենել կամ ներմուծել դրսից: Համախմբելով համայնքի անդամներին, կամավորական շարժումը նպաստում է համայնքի առանձնահատկությունների բացահայտմանը և սոցիալական փոփոխության մեխանիզմի ստեղծմանը (Կաժոյան 2009):

Մասնակցային հանրակարգային (ինստիտուցիոնալ) կայուն զարգացումը համայնքում սոցիալական փոփոխության մեխանիզմի կենսունակության գրավականն է: Ցանկացած կամավորական շարժում վտանգվում է, եթե այդ գործոնն անտեսված է ու նրա զարգացման ուղղությամբ համապատասխան գործողություններ չեն իրականացվում, այսինքն եթե շարժման առաջնորդների քաղաքացիական կազմակերպման մասին ոչ ադեկվատ գիտելիքներն ու պատկերացումները, ինչպես նաև հանրակարգային զարգացումն ուղղորդելու իրենց անկարողությունը, խոչընդոտեն հաղորդակցության գործընթացը:

Սոցիալական փոփոխության ուղղված համայնքային զարգացման գործողությունները ենթադրում և, արդյունքում առաջացնում են առկա իշխանության վերաբաշխում (Կաժոյան 2009, 54): Հետևաբար, հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել և ճիշտ գնահատել զարգացման գործընթացին աջակցող և հակազդող ուժերի տեղաբաշխումը: Յուրաքանչյուր համայնքում գործող սոցիալական փոփոխության մեխանիզմը առանձնահատուկ է: Այդ մեխանիզմը հնարավոր չէ պատճենել կամ ներմուծել դրսից: Այն կենսունակ և կայուն է, երբ պատկանում է համայնքին: Յուրաքանչյուր համայնք պիտի անցնի իրեն բնորոշ այն բացառիկ ուղին, որը հնարավորություն կտա ներգրավելու առկա միջոցներն ու միասնական ջանքերով ստեղծելու սոցիալական փոփոխության իր առանձնահատուկ մեխանիզմը: Այդ գործընթացների մեջ

կարևոր դեր ունի կամավորությունը: Աշխարհի բոլոր համայնքներում այն ապահովում է քաղաքացիական հասարակության զարգացումը: Օգնելով հասարակական ակտիվ խմբերին միջոցների ներգրավման, ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման կամ ծրագրեր մշակելու և իրականացնելու գործում, տեղական և այլազգի կամավորները սովորեցնում և իրենք էլ շարունակ սովորում են, օգնում են զարգացնել համայնքները և սոցիալական փոփոխություն իրականացնել աշխարհի տարբեր անկյուններում:

Հղումներ

Կաժոյան Հ. (2009). *Համայնքային զարգացումը քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացում* (ուս. ձեռնարկ).– Եր. Հեղին. հրատարակություն, 210 էջ:
Քաուներփարթ ինքերնեշնլ *Կաբգմավորության մշակույթը Հայաստանում* Երևան. «Անտարես» 2010:
CIVICUS: World Alliance for Citizen Participation (2008), *Volunteerism and Social Activism. Pathways for Participation in Human Development*,
http://www.unv.org/fileadmin/img/www/Volunteering_and_Social_Activism_FINAL.pdf
Hodgkinson, V. (2003) 'Volunteering in Global Perspective' in Dekker, P. and Halman, L. (Eds.) *The Values of Volunteering: Cross-cultural perspectives*, New York: Kluwer Academic/Plenum. p. 32-51
Ochman, M. and Jordan, P. (1997), *Volunteers: A Valuable Resource*, Baltimore, Maryland: The Johns Hopkins University Institute for Policy Studies, 552 p.
Rochester, C. (2006), *Making Sense of Volunteering: A Literature Review*, London: Volunteering England,
http://ws1.roehampton.ac.uk/researchcentres/csvca/researchconsultancy/Making_sense_of_volunteering.pdf
United Nations Development Programme (UNDP) Evaluation Office (2003) *Volunteerism and Development* in Essentials, No.12, October 2003. New York: UNDP, 12 p.,
http://www.worldvolunteerweb.org/fileadmin/docs/otd/pdf/2003/essentials_vol.pdf
Voluntary Services Overseas (2003). The Role of Volunteers in International Development. Position Paper. London: VSO, 9 p.

The role of volunteerism in the processes of community development in Armenia

The article presents volunteerism in the context of community development. In particular, the current state and issues of voluntary citizen participation in community development are observed and the place, role and driving factors of volunteerism in the processes of community development in Armenia are analyzed. Volunteerism is the driving force of consolidation and therefore the community wide action and the development process in any community depends on the culture of volunteerism. Being actively involved in such processes, local and foreign volunteers not only help communities develop and implement social change but also learn themselves and get empowering experience in implementing social change.